01/10.1/4632-09

2009-07-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արևիկ Պետրոսյանի, Արա Բաբլոյանի, Մխիթար Մնացականյանի, Էռնեստ Սողոմոնյանի և Մկրտիչ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

1. «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածում «31-ի» թիվն անհրաժեշտ է փոխարինել «29-ի» թվով.

2) 1-ին հոդվածով կատարվող փոփոխությունն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի վերնագրի բովանդակությանը՝ զերծ մնալով տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող արտահայտություններից։

2. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում՝

1) «նոյեմբերի» բառն անհրաժեշտ է փոխարինել «հոկտեմբերի» բառով.

2) «ա» և «բ» կետերում անհրաժեշտ է «պարբերության» բառը փոխարինել «մասի» բառով, իսկ համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին.

3) «ա» կետում պետք է նկատի ունենալ, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետում «ունեցող» բառ նախատեսված չէ։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում։

Միաժամանակ կարծում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթով հնարավոր չէ համապարփակ լուծել ընտանիքը վարկաբեկող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, իրավախախտումներին նպաստող, երեխաների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող բռնություն և դաժանություն քարոզող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածման անթույլատրելիության խնդիրները։ Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունում մշակվել և ներկայումս քննարկվում է «Հասարակության բարոյականության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով կարգավորվում են նաև նշված խնդիրները։

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գևորգ Պետրոսյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-641-05.06.2009-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մայիսի 31-ի ՀՕ-59 օրենքի 18-րդ հոդվածի չորրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Արգելվում է երեխայի առողջության, մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիրակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության եւ դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության եւ գրականության տարածումը։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ընդլայնել օրենքով արգելվող տեղեկատվության եւ գրականության տարածման շրջանակները, մասնավորապես, արգելվում է նաեւ այն տեղեկատվության եւ գրականության տարածումը, որոնք բացասաբար են ազդում

երեխայի առողջության, մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիրակության վրա, վարկաբեկում են ընտանիքը։

Հիշյալ փոփոխությունները բխում են հանրային լայն շրջանակների պահանջներից։

Նախագիծ
Պ-641[1]-05.06.2009-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին

***Հոդված** 1.* «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի 24-րդ հոդվածի.

ա) առաջին պարբերության «է» կետի «ունեցող» բառից հետո լրացել «, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող» բառերը.

բ) երրորդ պարբերության «անչափահասների» բառից հետո լրացնել «առողջության,» բառը, իսկ «բարոյական» բառը հանել։

***Հոդված** 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է, ի թիվս օրենքով նախատեսվածի, արգելել նաեւ հեռուստառադիոհաղորդումներում օգտագործել այնպիսի

հաղորդումների հեռարձակումները, որոնք վարկաբեկում են ընտանիքը, նպաստում են իրավախախտումներին, ինչպես նաեւ առաջարկվում է սահմանափակել նաեւ այն հաղորդումների հեռուստառադիոհաղորդումների եթեր հեռարձակման ժամը, մասնավորապես՝ ժամը 24.00-6.00-ը, որոնք կարող են հնարավոր բացասական ազդեցություն ունենալ անչափահասների առողջության վրա։

Հիշյալ փոփոխությունները բխում են հանրային լայն շրջանակների պահանջներից։

Հեղինակներ՝ Արեւիկ Պետրոսյան, Արա Բաբլոյան, Մխիթար Մնացականյան, Էռնեստ Սողոմոնյան, Մկրտիչ Մինասյան